

ԼԻԲԱՆԱՆԱՀԱՅ ԸՆԿԵՐԱՅԻՆ
ԾԱՌԱՅՈՂՆԵՐՈՒ ՄԻՈՒԹԵԱՆ
ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԷՆ

ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԱՄԵՐԳ

Լիբանանահայ ընկերային Ծառայողներու Միութեան նախաձեռնութեամբ, Երեքշաբթի, 31 Հոկտեմբերի երեկոյան ժամը 8:30ին, Եռ-Խո-Ժի-ի սրահին մէջ տեղի ունեցաւ բարեգործական համերգ մը, կատարողութեամբ «Հորովել» երգչախումբին եւ Լիբանանի Պետական երաժշտանոցի նուագախումբի երաժիշտներէն կազմուած սենեկային նուագախումբի մը, ղեկավարութեամբ Յարութ Ֆազլեանի:

Համերգին նպատակն էր վերջերս վիրահատուած տաղանդաւոր շուրջակահար Յովիկ Գէորգեանի երկվաճակումը փոխարինման հիւանդանոցային հաշուեցոյցը փակել: Յիշենք, որ անցեալ տարի նոյն նպատակին համար Լիբանանահայ երաժիշտներ երաժիշտներ Ամերիկեան համալսարանի «Էսէմպլի Հոյ» մէջ տուած էին այլ համերգ մը, որուն հատկութիւն պիտի գումարուի սոյն համերգին եւ անհատ նուիրատուներու ներդրումներէն գոյացած գումարը ամբողջացման համար նուիրատուութիւններ կարելի էր կատարել դիմելով ձինիշեան կեդրոն (հեռ. 01 - 261008):

Գեղեցիկ եւ սրտազրաւ երեւոյթէն անդին, երեկոն նաեւ երաժշտական վաշխի առիթ մը եղաւ: Նուագախումբը նախ կատարեց Մարչելլոյի բարձրարարիկ (oboe) եւ լարային նուագախումբի համար յորինուած քննչերթոն, որուն մարտի, անայլթք ու հաղորդական մենակատարը եղաւ Էթիէն Քիւփէլեան: Ապա հնչեց Վիվալտի «Չորս եղանակներ»էն «Ամառ»ը, մենակատար ունենալով Միշէլ Մէլլարան: Համերգին նուագախումբային բաժինը երաժիշտներու Մոցարթի առաջին «Տրիպլեթիմենթո»ով: Ապա նուագախումբին միացաւ «Հորովել» երգչախումբը, որուն փայլուն ելոյթներուն «Ազդակ» անդրադարձած է նախապէս: Հնչեցին Մելիք Մալիսաբալեանի «Ճան Հայաստան», Աբարլաթի «Gial sole dal Gange», Տելլապի «Messe Breve», հայ քաղաքային ֆոլքլորէն շարք մը երգեր (կարճէ վերատեսութեան ներկայացուցաւ այս շարքին գործիքաւորումը՝ ոճական եւ կերպարային առումով) եւ Մելիք Մալիսաբալեանի «Մենք հայեր ենք» ստեղծագործութիւնները:

Ընկերային Ծառայողներու Միութեան անունով Անդրանիկ Տաքէսեան շնորհակալութիւն յայտնեց երգչախումբին եւ նուագախումբին՝ այս իրագործումին համար, բժիշկներուն եւ Պետական երաժշտանոցի սնորհէն դուրս: Ուսումնական հաստատութիւններուն նուիրատուութեան եւ ձեռնարկը քաջալերելու համար:

ԹՐԹԱԿԻՑ

22 ՄԱՐՏԻ ՄԱՐԱՓՈՐԶ

ՊԱՇՏՊԱՆ ՓԱՏՏԱԲԱՆՆԵՐԸ ՊԱՇՏՊԱՆ ՊԱՇՏՈՆԵՐԸ ԸՆԵՆ ԴԱՏԱԲՈՐԸ

Շարաք, 4 Նոյեմբերին, Լեւոնային Ղարաբաղի Հանրապետութեան նախագահին ղեմ մահափորձի հարցով դատավարութեան ընթացքին Սամուէլ Բարայեանի պաշտպան փաստաբանը դիմում ներկայացուց փոխելու համար դատաւոր Սուրէն Ալեքսանեանը՝ անոր նախապաշարեալ մտեցումներին համար:

Դիմումին միացան նաեւ մնացեալ պաշտպան փաստաբանները: Սակայն դիմումը մերժուեցաւ:

Այս որոշումէն ետք պաշտպան փաստաբաններ ժողովեցին Շարաբեան, Էդուարդ Զինարեան, Էդուարդ Աղաջանեան եւ Անժելա Յակոբեան բաց նամակով մը ղրկեցին Հայաստանի նախագահ Ռոպէրթ Բոչարեանին, Լեւոնային Ղարաբաղի Հանրապետութեան նախագահ Արկաղի Ղուկասեանին, Հայաստանի եւ Լեւոնային Ղարաբաղի Հանրապետութեան խորհրդարաններու նախագահներուն, Մարդկային իրաւանց պաշտպանութեան պետական եւ հասարակական բոլոր կազմակերպութիւններուն, ընդգծելով, որ 22 Մարտի մահափորձին հարցով դատավարութիւնը կը շարունակուի միջազգային չափանիշներու եւ Լեւոնային Ղարաբաղի Հանրապետութեան քրէական դատավարութեան օրէնքներու խախտումով:

Բաց նամակին հեղինակները յատկապէս ընդգծեցին դատաւոր Ալեքսանեանի «կողմնակի եւ կանխամտածած» վերաբերմունքը, ինչպէս նաեւ Սասուն Աղաջանեանի ծայր աստիճան հիւանդ վիճակով դատարան ներկայանալու պարտադրանքը:

ՃՇՂՈՒՄ
Չորեքշաբթի, 1 Նոյեմբերին, տեղեկութիւն տուած էինք Հոկտեմբերին Լայ Ճերգիի մէջ տեղի ունեցած Ամերիկայի Նայ Աւետարանցական Միութեան ընդհանուր ժողովին մասին:
Կը ճշդենք, որ վեր. դոկտ. Կիրակոս Չոփորեան Միութեան պատուոյ ընդհանուր տնօրէնն է: Ան ընդհանուր տնօրէնի պաշտօնէն հանգստեան կոչուած է 1987ին:

**«ԱԶԳԱԿ»-ի
ՀԵՌԱԶԱՅՆԻ ԹԻԻԵՐԸ**
«ԱԶԳԱԿ»-ի հետ կապուելու համար
հեռաձայնել հետևեալ թիւերուն.-
258526, 260115 եւ 241274:

Շ. Յ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ 110ԱՄԵԱԿԻ ԵՆՈՒՄ ԱԹԵՆԻ ՄԷՋ

«ԻՆՉՊԵՍ ՈՐ ԸԱՅ ԺՈՂՈՎՈՐԴԻՆ ՅԱՂՈԱՆԱԿՆԵՐԸ ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ԸԱՍԱՐ ԵՂԱԾ ԵՆ ԻՐ ՅԱՂՈԱՆԱԿՆԵՐՈՒՆ ԻՐԱՒ ԶԱՓԱՆԻՉԸ, ԱՅՆՊԵՍ ԱԼ ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ՅԱՂՈԱՆԱԿՆԵՐԸ ՄԻՉՏ ՊԱՏԿԱՆԱԾ ԵՆ ԸԱՅ ԺՈՂՈՎՈՐԴԻՆ»

ԸՍԱՒ ԸՐԱՆԴ ՍԱՐԳՍԵԱՆ

Կիրակի, 5 Նոյեմբերին, Աթէնքի Նէա Զմիռնի շրջանի «Էսթիա» սրահին մէջ Աշտուղ Լ. Յ. Դաշնակցութեան 110ամեայ տարեդարձը՝ մեծաթիւ հանդիսականներու ներկայութեամբ: Չեռնարկին գլխաւոր բանախօսն էր Լ. Յ. Դ. Բիրոյի ներկայացուցիչ Նրանդ Մարգարեան:

Չեռնարկին բացումը կատարեց Լիզա Աւագեան, որ ներկայացրաւ հրաշքեղ մէկ վայրկեան յոտնկայս լոռութեամբ յարգելու նախատակներուն յիշատակը: Այնուհետեւ Արշալիր Գազանճեան եւ Սոնա Սպարթայեան արտասանեցին Ռուբէն Զարդարեանի արձակ բանաստեղծութիւններէն «Բագիհի փառաբանութիւնը»:

Լ. Յ. Դ. Յունաստանի կեդրոնական կոմիտէին խօսքը փոխանցեց կեդրոնական կոմիտէի ներկայացուցիչ Օսիան Ֆարաճեան, որ ըսաւ. «Դժուար պիտի ըլլայ ընդհանրապէս խօսիլ 110 տարեկան կուսակցութեան մը մասին, որովհետեւ նման կուսակցութեան մը պատմական, բայց նաեւ պատմութեան անցած դերակատարութիւնը պատմաբաններու վերլուծական ուսումնասիրութիւններու առարկան պիտի դառնար, եւ՝ անցեալի բախտորոշ ներկայութեան մը նուիրում յարգանքի արտայայտութիւն:

Այս չէ սակայն Հայ Յեղափոխական Դաշնակցութեան պարագան: Դաշնակցութիւնը հայ ժողովուրդին մնայուն համեմատ խօսակիցը եղաւ անընդհատ մեր նորագոյն պատմութեան ընթացքին եւ կը շարունակէ՝ մնալ այդ խօսակիցը՝ գործով ու գործօն ներկայութեամբ մինչեւ այսօր, նոյնացած ժողովուրդի ակնկալութիւններուն ու տագնապներուն հետ, սպրեւիտ հայ ժողովուրդի առօրեան հայրենիքէն ներս թէ դուրս, իբրեւ անոր անբաժան ու անբաժանելի մասնիկը:

Եւ քանի որ հոս է, ներկայ է եւ այդ ներկայի ընդմէջէն իր սպասուած որոնելու ու կերտելու գործընթացին մէջ կը գտնուի մեր ժողովուրդը, ներկայ է նաեւ Լ. Յ. Դաշնակցութիւնը՝ արձագանգելու համար ժողովուրդին ցաւին, իղձերուն, հօգոր եւ անդեղի ճանցին:

Ապա Ֆարաճեան անդրադարձաւ Լ. Յ. Դաշնակցութեան պատմական առաքելութեան եւ հայրենիքի մէջ տարած անոր գործին: Ան շեշտեց նաեւ, թէ Դաշնակցութիւնը կը շարունակէ քայլել՝ հայրենիքին մէջ արմատաւորելու եւ ամրապնդելու համար բարոյականութեան արժեքները քաղաքականութեան եւ տնտեսութեան մարզերուն մէջ՝ յուսախաբութեան, արտագաղթի, ընկերային անպահովութեան եւ պարտաւորութեան անտարբերութեան ծնունդ տուող պատմական արմատախիլ ընելու առաջադրանքով:

Ֆարաճեան եզրակացուց իր խօսքը՝ ըսելով, թէ Դաշնակցութիւնը կը հաւատայ այս թիրախներուն նուաճման եւ պատրաստ է իր բոլոր ուժերով պայքարելու անոր համար, որովհետեւ այս է հայրենեան պատգամն ու պահանջը, որուն միջոց պիտի հնազանդի Դաշնակցութիւնը:

Իր խօսքի աւարտին Լ. Յ. Դ. Յունաստանի կեդրոնական կոմիտէի ներկայացուցիչ Օսիան Ֆարաճեան թեմ հրաւիրեց Լ. Յ. Դ. Բիրոյի ներկայացուցիչ Նրանդ Մարգարեանը, որպէսզի փոխանցէ օրումն պատմութիւնը:

Առաջին հերթին Լ. Յ. Դ. 110ամեակի գործունէութեան ընդհանուր եւ խիտ արժեքները կատարելով՝ Լ. Մարգարեան հաստատեց, որ յանուն Հայաստանի եւ հայրենեան բովանդակ շահերու պաշտպանութեան համար միուած շարունակական պայքարի երթ մը եղաւ Դաշնակցութեան կենսագրութիւնը:

Օրումն պատգամախօսը յայտարարեց, թէ 110 տարիներու պատմութեամբ - ձեզի կը ներկայանանք հայ ժողովուրդի եւ Հայաստանի անվտանգութեան եւ սպառնալու մեր ժողովուրդի կեցու-

թեան ամբողջական բարեփոխման եւ բազմակողմանի զարգացման համար անհրաժեշտ երաշխիքներու ստեղծման մեր իտելալը իրականացնելու հետագայ պայքարի պատասխանատուութեան զգացումով:

Ձեզի կը ներկայանանք բաց ճակատով. մէկ դար եւ տասը տարուան պատմութիւնը մեր պատմութիւնն է այնտեղ չկայ նեղ կուսակցական շահերու եւ առանձնաշարժողութեան հետքն անգամ: Ինչպէս որ հայ ժողովուրդի յաղթանակները Դաշնակցութեան համար եղած են իր յաղթանակներուն իրաւ չափանիշը, այնպէս ալ Դաշնակցութեան յաղթանակները միշտ պատկանած են հայ ժողովուրդին:

Այնուհետեւ Լ. Մարգարեան կեդրոնացաւ վերջին տասնամեակի Լ. Յ. Դաշնակցութեան գործունէութեան արժեքներուն վրայ: Արցախեան ազգային- ազատագրական շարժման հետ Դաշնակցութեան հայրենիք մուտքը նրկատեց - հարազատ գաւառի տուն դարձ - եւ ոչ թէ «օտարացած»-ի կամ -հիրի- վերադարձ մը: Իսկ Արցախի ազատագրուելու առաջին օրէն եղաւ ու կը շարունակէ մնալ Լ. Յ. Դ. հայրենական գործունէութեան նպատակն ու յիշատակը ուղղութիւնը, գերխնդիրը:

Անցնելով Փետրուար 1998ի իշխանափոխութեան հետեւած նոր ժամանակաշրջանի արժեքներուն՝ Լ. Մարգարեան հաստատեց, թէ - ներկայ իշխանութիւններուն կողմին յայտնուելով՝ Դաշնակցութիւնը կը իր մտադրուէ պետական- քաղաքական պատասխանատու վարքագիծ ունենալու եւ բարոյականութեամբ ու սկզբունքայնութեամբ գործելու մեծ մարտահրաւիրը:

Լ. Մարգարեան յատուկ կարեւորութեամբ անդրադարձաւ Դաշնակցութեան վերջին տասնամեակի երթին մէջ հայկական Սփիւռքին ունեցած պատուաբեր ներդրումին: Ան շեշտեց, որ Սփիւռքը ներկայիս կը գտնուի կազմակերպականօրէն ուժեղանալու հրամայականին առջեւ, որպէսզի կարենայ քաղաքական ազդեցիկ ուժի իր կարելիութիւնները լիովին արդիւնատուրել թէ՛ ի սպաս հայրենիքի պետականութեան հօգուցման եւ թէ հայրենի հայրենեան դիմագրաւած ծանրագոյն տագնապի յաղթանակներուն:

Դաշնակցութեան վերջին տասնամեակի գործունէութեան ընդհանուր արժեքներուն լոյսին տակ, Լ. Մարգարեան իր պատգամը եզրակացուց թուելով՝ Դաշնակցութեան պայտուսն եւ վաղու անոր գործունէութեան գլխաւոր առաջադրանքները:

Հրանդ Մարգարեանի խօսքէն ետք խօսք առին նաեւ Յունաստանի մէջ Հայաստանի դեսպան Արմէն Պետրոսեան, Ռուկի Յունաստանի Ժրջանային վարչութեան ներկայացուցիչ Տիգրան Բաչիկեան եւ Յունաստանի Ազգային վարչութեան տնտեսապետ Արմէն Տէրեան:

Անոնք վեր առին Լ. Յ. Դաշնակցութեան դերակատարութիւնը հայ ժողովուրդի պատմութեան մէջ՝ անցնող 110 տարիներուն իրենց ընթացքին: Անոնք նաեւ այս առիթով ընթաց շարժառարարութիւնները յայտնեցին:

Չեռնարկին առիթով տպագրուած էր 24 էջանոց գումաստիպ գրքուկ մը, որ կ'ընդգրկէր Հայ Յեղափոխական Դաշնակցութեան ուղեկից միութիւններու ողջոյնի խօսքերը:

Գրքուկին մէջ տեղ գտած էին Յունաստանի Հայ Կապոյտ Խաչի, Մակեդոնիոյ եւ Թրակիոյ Հայ Գթութեան Խաչի, Յունաստանի Համագայիցի եւ Յունաստանի Հ.Մ.Ը.Մ.ի Ժրջանային վարչութիւններու ողջոյնի խօսքերը, եւ Լ. Յ. Դաշնակցութեան պատմութեան ու գաղափարախօսութեան մասին տեղեկութիւններ:

Յայտնենք, որ Լ. Յ. Դաշնակցութեան 110ամեակին առիթով - Ազատ օր - թերթը եւս 12 էջանոց բացառիկ մը հրատարակեց:

ՄԵՐ ԱՌՈՐԵԱՅԷՆ

ԵԹԷ ԱՅՍՕՐ ՄԱՆՈՒԿՆԵՐ ԶԾՆԻՆ, ՈՒՐ ՓՆՏՈՒՆԷՔ ՎԱՂՈՒԱՆ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹԻՒՆԸ

Աշխարհի կարգ մը ցամաքամասերու վրայ ապրող ժողովուրդներու թիւին աճը մտահոգութիւն կը պատճառէ տուեալ երկիրներու ղեկավարներուն: Մասնաւորաբար ափրիկեան եւ ասիական ցամաքամասերու վրայ բազմամիլիոն շուրջ հաշուող երկիրներ, ինչպէս Չինաստան եւ Ինդիոն, վաղու անցած է, Չոկաստան եւ այլ մեծ երկիրներ, Ափրիկէի մէջ Եգիպտոս եւ սեւ ցամաքամասին միւս երկիրները, «կը տառապին» թիւի աճ: Ծնունդներու թիւը նուազեցնելու քաղաքականութիւն մը որդեգրուեցաւ տարիներ առաջ, որպէսզի տնտեսութիւնը չվտանգուի եւ կարելի ըլլայ դիմադրել սովին:

Մեկնելով այս ընդհանուր տրամադրութիւններէն, փոքրաթիւ բնակչութիւն ունեցող երկիրներ եւս դիմեցին նախագուշտութեան սահմանափակելով ծնունդներու աճը: Երրորդ Աշխարհի կողմէն երկիրները Միջին թէ Մերձավոր Արեւելքի մէջ, եթէ մասամբ հետեւեցան ծնունդներու աճը սահմանափակելու քաղաքականութեան, այսուհանդերձ մեծ մասամբ անոնք մնացին անտարբեր ջանալով հասնիլ միլիոնավոր հաշիւներով բազմապատկուող ժողովուրդներու քանակին, առանց մտահոգուելու որակին բարելաման հարցերով:

Մեզ հետաքրքրողը այս պարագային հայ ժողովուրդն է, անոր ապագայ աճման պարագան: Բոլորիս ծանօթ է հայ ժողովուրդին ճակատագիրը, որ միշտ ենթարկու էր եղած է ջարդի, սպանդի, գաղթի, բնութեան աղետներու ստեղծած չարիքներուն: Դայ ժողովուրդին թիւը եթէ աճած է 1915ի եղեռնէն ետք, այդ եղած է շնորհիւ տառապած հայ մայրերուն նուիրումին, որով կարելի դարձած է ընտանիքներ ծաղկեցնել 5,6,7 ու երբեմն աւելի ծնունդներով: Դայկական Յեղափոխութենէն ետք, երբ «Որբերը տուն չիւնեցին», այդ տուններուն մէջ քիչ էր «համարանք» ունեցանք: Բ. Աշխարհամարտէն ետք հայ ժողովուրդին համար «Ընտանիք» հասկացողութիւնը կը մնար գրեթէ նոյնը. գաւազներով հրճուիլ եւ... հարստանալ: Բայց 20րդ դարու վերջին քառորդէն առից, երբ մեծաթիւական քաղաքագետները ծնունդներու սեղմուն հոչակեցին, անցնէ արագ եւ շուտափոյն մասնակցողը եղան կարծիք հայ ընտանիքները «Դարը փոխուած է» լոզունգը որդեգրելով:

Եթէ շո ըրիցք, թէ սխալ... Իրաքանչիւր հայ թող այս հարցուն ուղղէ ինքնիրեն ի մտի ունենալով հետեւեալ պատճառները: 20րդ դարու Դայկական Յեղափոխութիւնը, որուն ընթացքին 300.000 մանուկներ ջարդուեցան: Կորսուեցան, հողորդային Միութեան արքան երկրորդ ցեղասպանութեամբ Սիպրիոյ սամանափոխութեան մէջ ոչնչացած մեր համարանքը: Արտասահմանի գանձաւոր երկիրներուն մէջ տեղի ունեցած քաղաքական թէ ընկերային վերիվայրուներու պատճառով ստեղծուած գաղթըրը աշխարհի տարածքին սփռուելով: 1988ի «Գեղեթներու» տեղի ունեցած դարաբաղեան քարոզը ու երկրաշարժին զոհերուն բազմահազար թիւը: Օտար անուսնութիւններով ստեղծուած թուական աճի մեր կորուստը, եւ այսօր, այլ պատճառներու կարգին, ինքնազոհ կեանք մը վարելու պատրուակով ստեղծուած չկանգունը. ընտանիքներու թիւը 3 կամ 4ը չանցնելու քաղաքականութեամբ:

Եթէ մեր հայեացքը դարձնենք մեր շուրջը, կը տեսնենք ամայութիւն մը նորածնի սերունդի բացակայութեան: Ո՛ր եւն ծաղկունի ճակատագրուած ծնունդները: Եթէ այսօր ծնունդներ չունենանք, ո՛ր փնտռենք վաղուան երիտասարդութիւնը...

ՄԵՐ ԲՈՒՆՈՒ ԸՄԲՈՒՄՆԵՐԸ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹԻՒՆ ՆԵՐՎԱՅՈՒԹԵԱՄԲ ՊԱՅՄԱՆԱՌՈՐՈՒԾ ԵՆ

ՈՐ որ ալ գտնուից, ընտանեկան թէ ընկերային շրջանակներու մէջ, մեր նայածքները կը սեւեռուեցնէ երիտասարդ սերունդին: Այս բնական փափակ ու փնտառու է: Բայց եթէ մեր երկրին մէջ տեսնուած գանձաւոր դժուարութիւնները պատրուակելով զի՞ծ քաշենք ընտանիք հասկացողութեան վրայէն, եթէ անց տեղ կրկնենք նոյն յանկերը, թէ «շատ դժուար է գաւազ ունենալ ու պահել», քայլ մը իսկ չենք կրնար յառաջդիմել: Այսքան ժառանգութիւն նոյնիսկ ունենող դասակարգին կողմէ, որ տնտեսական տագնապի հոգ չունի, բայց որ իր կարգին «գաւազ մեծցնելու դժուարութեան» մասին կը խօսի: Ո՛ր մնաց մայրական, ծնողական գոհողութիւնը: Ո՛ր մնաց մեր քիչ թիւը, մեր մաւր վրայ համրուող միլիոնը անցնելու հրամայականը: Ու պէտք չէ սոսկալ, որ մեծապետական ղեկավարութիւնը առաջին անգամ կը բարբառի թիւ - քանակի գործունէութեան: Ինչո՞ւ կը մոռնանք նաեւ այն իրողութիւնը, թէ որակին գործունէութիւնը կախում ունի քանակին մեծութենէն: «Զիչն քիչ, շատն շատ» փիլիսոփայութիւնը կարելի չէ անստելի քանջելու հաշիւով:

Դազար փախտու, որ մեր վարժարաններուն մէջ հետըզհետ կը պակսին թիւերը «ծիւերու» կամ «բողոքներու»: Դետեալաբար «ծաղիկները» պիտի թառամին մօտիկ ապագային, եթէ այս անվաճող քաղաքականութիւնը շարունակենք:

Տակաւին չանդրադարձանք մեզ ծովող գործունէրուն, տրամադրութիւններուն, ազգային կեանքին երես դարձուած մեծամիտներուն, մակերեսայնութեան հետ դաշինք կնքած քաղքեցիներուն, որոնք կը հարուածեն մեր արմատները, գիտաբար կամ անգիտաբար:

Եթէ ակնկալուեց մեր երկրուան լուսամտի առաջնորդներու պատգամներուն, անոնց բոլորն ալ ունին մէկ ու միակ խրատ - խորհուրդ, ուղղուած ազգին երիտասարդութեան. «Ազգին ապագան երիտասարդութիւնն է»: Այսօր սակայն դարձած ենք ինքնատու, կը փաշինք պարտաւորութիւնները: Նոյնիսկ ունինք դասակարգ մը, որ կը ծիծաղի մեկ ակնի զաւան ծնած ծնողներուն վրայ իբրեւ յառաջադէմ վարքի վկայութիւն:

Եթէ աշխարհի վրայ կայ ժողովուրդ մը, որ պարտաւոր է մտածելու իր թիւին աճման մ

Ը. Յ. ԴԱՅՆԱԿԳՈՒԹԵԱՆ 110ԱՍԵԱԿԸ

Հ. Յ. Դայնակցութեան 11 տասնամեակներու մարտունակ գոյութիւնը հայ ժողովուրդի հաւաքական խիղճը խտացնող կենդանի գործին վաւերական վկան է: Վկան է մասնաւոր հայ ժողովուրդի ազատագրութեան հրամայականին առջեւ կանգնող իրերայաջոր սերունդներու գործին եւ ուղիին առաջնորդող իր ազգային ու զաղափարական տեսլականները ներարկելու պատմական յանձնառութեան:

110ամեայ իր պայքարի վարքագիծը զարգացած է իրար յաջորդող տասնամեակներու եւ յիսնամեակներու ընկալանուն հուղիթով: Իր գործունէութիւնը շահճման ֆիզիկական հայ կենսաբան մէջ իրար հակադրող կամ հակադրուող երեւոյթներու պատմական տատանող ընտրանքներով: Գիտցաւ իր ուզածը, գիտցաւ իր ըրածը, գիտցաւ հայ կենսաբան «ինչո՞ւ» ներու պատասխաններուն դարմանը գտնել իրաքանչիւր հարցին մէջ հայ ժողովուրդին բովանդակ շահերը պաշտպանելու առաջադրանքով:

1990 թուականի Օգոստոսէն ի վեր Հ. Յ. Դայնակցութիւնը իր հրամայական ներկայութիւնը բացայայտելով հայրենիքի մէջ, պաշտօնագէտ ալ իր երկրորդ կենսաբան միւլտիտուալ Հայաստանի հողին վրայ՝ ողբէրէն ու զաղափարախոսական իր ներկայութիւնը վերածելով նաեւ կազմակերպական կենդանի իրականութեան:

Հ. Յ. Դայնակցութիւնը ամենայն պատասխանատուութեամբ գործ ունի ստանձնելիք հայաստանեան ու արտասահմանեան իր բովանդակ կառուցներով ու գործունէութեամբ, ազգային, քաղաքական, գաղափարական, գրական ու մշակութային բնագաւառներէ ներս՝ հայու ազգային դիմագիծի կերտումին, հայրենասէր զանգուածներուն նկարագրի կազմաւորման եւ մեր պահանջատրական պայքարի ձգտումները յեղափոխական տեսլականներով ազգային հաւաքական գիտակցութեամբ դարձնելու ակնկալութեամբ:

Հայ Յեղափոխական Դայնակցութեան գաղափարախօսութիւնը պիտի է ներշնչէ Հայաստանի ազգային քաղաքականութեան զանազան մարզերը, մասնաւորապէս որոնք ներագաղափար իրաւունքի զինուոր նահանջողական կեցուածքներ կը փորձեն դիտարկութեան պատմութեան իր տակ թողել, Հայ Դատի մեր անժամանցելի երազին առջեւ մուծ վարագոյր մը ինքնցնելու դիտարկութեամբ:

Հ. Յ. Դայնակցութիւնը պիտի շարունակէ զիմպոնտը ու ծառանալ այս եւ նման ազգագային ու նահանջողական կեցուածքներուն դէմ:

Հ. Յ. Դայնակցութիւնը հաւատաց ու ապրեցաւ Ազատութեան Դրօշի սկզբունքով: Դրօշը հայ ժողովուրդի յոյսի խորհրդանիշն է, բայց երէկի յոյսին այսօր միախառնուած է ժողովուրդի գոյութեան անժամանցելի հրամայականը:

Երբէք զանգուածային արտագաղթը ժողովուրդը կոտորակող մակարդակներու հասած է: Հետզհետէ նորանոր ու դեռ անձանթ զաղուծներ կը հիմնուին եւ տարագրի հայ բազմութիւններուն հետ մեր պետութիւնը հրամայականօրէն զբաղիլը իր քաղաքականութեան առաջնահերթութիւններու պարտաւորութիւններուն մէջ ներառած է: Վերջապէս ո՞վ եւ ի՞նչպէս դժմ պիտի կանգնի հայութեան կորուստին ու անոր շօշափելի բացասական հետեւանքներուն: Հայրենիքը, ճիշդ է, ունէ մէկ կուռ մենաշնորհ է, սակայն կրաւորականութիւնն ալ ազգի բախտը տնօրինող մարդոց մենաշնորհ է ի վերջոյ: Այսօր, Հայաստանի անկախութեան տասնամեակ մը ետք, հայրենիքի մէջ իր կազմակերպական ըլլալը ազգուժանք մը արժեքներու ճամբուն վրայ գտնուող Հ. Յ. Դայնակցութիւնը իր գործունէութիւնն ու առաջադրանքները առաւել գործունէութեան, լայնածաւալ ու բերուն հունի մէջ կենսատրեւելու հանգրուանին մէջ գտնուելով, կը շարունակէ համազգային տարողութեամբ իրեն վիճակուած առաքելութիւնը, որպէսզի հայրենիքը ամբողջապէս հաւաքական պատկանելիութեան մտածողութեամբ, ապրող հաւաքականութեան ընդմէջէն իր բեւազգային ինքնագիտակցութիւն ունեցող ուրոյն պետութիւնն ու ազգ:

Դայնակցութիւնը, ինչպէս երէկ ու այսօր, վաղն ալ պիտի շարունակէ ծառայել հայ ժողովուրդին ազգային ամբողջական շահերուն, Միասնականութեան, Ազգային Զարթոնքին, կազմաւորուող ինքնագիտակցութեան եւ ժողովրդավարութեան արմատաւորման ի խնդիր՝ իւրաքանչիւր հայու կենսաբան հասկացողութեան մէջ: Դայնակցութեան 110ամեայ գործին մասին պատմութիւնը պէտք է արձանագրել իր խօսքը: Մինչ այլ սակայն Հ. Յ. Դ. ն պիտի շարունակէ պատնէշի վրայ գտնուիլ Հայաստանի ու ազգայն զարգացման ու բարգաւաճման բարեյաջող ձեռքբերումներուն ի խնդիր, հաւատարմով որ հայրենիքը գերիվեր է կուսակցութիւններէն, որովհետեւ կուսակցութիւնները կը հիմնուին հայրենիքին ծառայելու անաւարկելի համոզմամբ:

Դայնակցութեան 110ամեայ գործին մասին պատմութիւնը պէտք է արձանագրել իր խօսքը: Մինչ այլ սակայն Հ. Յ. Դ. ն պիտի շարունակէ պատնէշի վրայ գտնուիլ Հայաստանի ու ազգայն զարգացման ու բարգաւաճման բարեյաջող ձեռքբերումներուն ի խնդիր, հաւատարմով որ հայրենիքը գերիվեր է կուսակցութիւններէն, որովհետեւ կուսակցութիւնները կը հիմնուին հայրենիքին ծառայելու անաւարկելի համոզմամբ:

Դայնակցութեան 110ամեայ գործին մասին պատմութիւնը պէտք է արձանագրել իր խօսքը: Մինչ այլ սակայն Հ. Յ. Դ. ն պիտի շարունակէ պատնէշի վրայ գտնուիլ Հայաստանի ու ազգայն զարգացման ու բարգաւաճման բարեյաջող ձեռքբերումներուն ի խնդիր, հաւատարմով որ հայրենիքը գերիվեր է կուսակցութիւններէն, որովհետեւ կուսակցութիւնները կը հիմնուին հայրենիքին ծառայելու անաւարկելի համոզմամբ:

ԻՍԲԱԳՐԱԿԱՆ «ԱԶՍ ՕՐ»-Ի Ը. Յ. Դ. 110ԱՍԵԱԿԻՆ ՆՈՒՐՈՒՄԸ ԲԱՅԱՌԻՒՄ

ARA TRAVEL IATA
ԱՐԱ

ARMENIAN AIRLINES
SALES AGENT,
ՈՒՐԱՆՈՒԹԵԱՍԸ ԳԵ ԳԱՅՏԵ
ԻՐ ՅԱՐԳՈՅ ԶԱՐԱՆՈՐԴՆԵՐՈՒՆ,
ՈՐ ԿԱՊԱՇՈՎԵ

ՊԵՅՐՈՒԹ - ԵՐԵՎԱՆ - ՊԵՅՐՈՒԹ
ԵՒ ԸԱԼԵՊ - ԵՐԵՎԱՆ - ԸԱԼԵՊ
ARMENIAN AIRLINES ընկերութեան

● ռեպրէզենտանտներ ● ապրանքի փոխադրութիւն

ԱՐԱ ԹՐԱՎԵԼ,
Պորթ Ըամուտ, Նամակատան 21եր,
Ըեռ. 266594 - 261296: FAX: 261296

Ի ՊԱՇՏՊԱՆՈՒԹԻՒՆ ՀԱՅԵՐԵՆԻ՝ ՄԵՍՐՈՊԵԱՆ ՈՒՂՂԱԳՐՈՒԹԵԱՆ

1999 թուականի Լոս Անճելըսում լոյս է տեսել լատինատիրական գիտութիւնների դոկտոր, փրոֆեսոր Լեւոն ինչեքեանի «Հայոց համագային մաշտոցեան համակարգուած միասնական եւ միակերպ ուղղագրութեան պատմութիւնը» (Ե.-Ի. պարբեր) մեծածաւալ աշխատութիւնը: Աւետիք Իսահակեանի անուան քաղաքային գրադարանում «Հայ դպրութիւն» ընկերութեան եւ գրադարանի տնօրէնութեան համատեղ կազմակերպած միջոցաւման աւիթը վատասակաշատ հայագետի վերոյիշեալ գրքի շնորհանդէսն էր: «Հայ դպրութիւն» հասարակական կազմակերպութեան նախագահ, բանաստեղծ Լեւոն Միրիշեանը ջերմօրէն ողջունեց հեղինակին նոր գրքի ծնունդը, շնորհանդէսի մասնակից լեզուաբաններին, գրականագէտներին, քաղաքական գործիչներին՝ շնորհաւորելով այս արժէքաւոր ուսումնասիրութեան աւիթով: Լեւոն ինչեքեանը մինչեւ 1981 թուական աշխատել է Երեւանի Մաշտոցի անուան Մատենադարանում, ապա մեկնել Լոս Անճելըս, որտեղ շարունակել է գիտնական-պրպատող շնորհակալ գործունէութիւնը: «Գրութեան արուեստի լեզուական քերականական տեսութիւնը միջնադարեան Հայաստանում», «Վարդան Արեւելցի. մեկնութիւն քերականին», «Գրածոյի համալսարանը հայ մանկավարժական մտքի պատմութեան մէջ», «Առաքել Միւնեցի. Յայրապ քերականութեան», «Յովհաննէս Երզնկացի. Հաւաքում մեկնութեան քերականին», «Գրիգոր Պահլաւունի Մագիստրոս. կենսաբան գործունէութիւնը. մեկնութիւն քերականին», «Հայ դպրութեան պատմութիւնը քննական տեսութեամբ», «Եսայի Նչեցի եւ Գրածոյի համալսարանը», «Գրարարի շարահիւտութիւնը» եւ այլ մեծարժէք, համապարփակ աշխատութիւններ վկայութիւնն են, անշուշտ, լայն տեսողաւորով, մեծ իմացատիրական օժտուած գիտնականի երկար տարիներին անուշ աշխատանքի: Ծնորհանդէսին ներկայացած ուսումնասիրութեան մէջ նա ուղղագրութեան խնդիրը չի դիտարկ իր բեւառ քերականական օրէնքերի կանոնակարգութեան մասին եւ անդրադառնալով մեր հին իմաստասէրներ աշխատութիւններին՝ լեզուն միասնական ուղղագրութեամբ համարում է ոչ միայն իր բեւառ շարժողական տեսլական միջոց, այլեւ ազգային հոգեկրթութեան ամբողջական արտայայտութիւն եւ ամբողջական հզոր երեւոյթ: 1922 թուականի Մարտի 3ի Հայաստանի կառավարութեան՝ նոր ուղղագրութեան անցնելու մասին ընդունած որոշումը համարելով սխալ՝ ինչեքեանը գտնում է, որ այս ուղղագրութիւնը հակադրական է իսկ ազգային տեսակետից աղէտարբ միտում խանգարելու սփիւռք-հայրենիք միութեան հետագայ ողջ ընթացքը: «Մէկ ազգ, մէկ մշակույթ» կարգախօսն ունայն է առանց համազգային միասնական ուղղագրութեան, որի բացակայութեամբ ազգի երկու հատուածները դատապարտուած են աւելի տարանջատման:

Մատենադարանի բաժնի վարիչ, պատմական գիտութիւնների թեկնածու Գեորգ Տէր Վարդանեանը, ճարտարագիտական համալսարանի լեզուի բաժնի մուծնքի վարիչ փրոֆ. Զանի Միրզաբէկեանը, փլիլիսոփայական գիտութիւնների թեկնածու Վարդի Միրզոյեանը, Խ. Արուփեանի անուան պետական մանկավարժական հաժարանի Միփիւռք» գիտատեսմանական կենտրոնի տնօրէն, բանասիրական գիտութիւնների դոկ-

տոր, փրոֆեսոր Սուրէն Դանիէլեանը, Երեւանի պետական համալսարանի լրագրութեան բաժնի մուծնքի դասախօս Գրիգոր Գուլումեանը, Գիտութիւններու Ազգային Ակադեմիայի հնագիտութեան եւ ազգագրութեան հիմնարկի ազգագրութեան բաժնի վարիչ, պատմական գիտութիւնների թեկնածու Դերենիկ Վարդանեանը, բանասիրական գիտութիւնների թեկնածու Յասմիկ Պետրոսեանը, «Ազգային միասնութեան ուխտ» կազմակերպութեան ներկայացուցիչ Ռաֆայէլ Համարաձումեանն իրենց ելոյթներում շնորհաւորեցին հեղինակին, որ դեռեւ 60ական թուականներին հաւաքելով փաստերի, հարցադրուելու հակայական նիւթ՝ իր գիտական հետեւողներին բաժնի վարիչ, որոնցում բրնայգերն պերսուում են ուղղագրութեան, գրադարմութեան, վանկատման տեսութեան, տրոսութեան կանոններին, ուսումնասիրելին:

Գեորգ Տէր Վարդանեանը նշեց, որ Մ. Կիլլըրեղյանի «Հայերենի ուղղագրութեան պատմութիւնը», Լ. ինչեքեանի այս վերջին ուսումնասիրութիւնը եւ Մ. Միլիսեանի «Հայերէնի աւանդական ուղղագրութիւն» բառարանը (հեղինակի՝ արտերկրում իր հայրենի 25 օրինակով տպագրած ուղղագրութեան վերաբերեալ ժամանակակից լաւագոյն տեղեկատու) կարեւորագոյն ուսումնասիրութիւններ են հայերէնի ուղղագրութեան միասնականութեան տեսական հարցերը պարզաբանելու առումով:

Բազմավաստակ գիտնական իր ստուարածաւալ, համակողմանի աշխատութիւնների համար յիշատակ արժանի է մեծարանքի եւ վաղուց նուաճել է հայոց գիտական կաճառի արտասահմանեան պատուաւոր անդամ դառնալու կոչումը, ուստի եւ առաջարկուեց այս հարցով դիմել Գիտութիւններու Ազգային Ակադեմիայի ղեկավարութեանը:

Ըստ Վարդի Միրզոյեանի, ուղղագրութեան հարցը մշակութային, լեզուաբանութեան խնդիրներ շրջանակներինց դուրս է, որը պիտի դառնայ պետական ուղղագրական քաղաքականութեան պարտական խնդիր: Կարեւորուեց գիտական մշակութային քաղաքականութիւնը ուղղորդող թերթի անհրաժեշտութիւնը՝ Միփիւռք հայահոծ գաղութներում տարածելու հեռանկարով: Նկատուեց նաեւ, որ հայաստանեան մասուլը, բացառութեամբ «Ազգ» եւ մասամբ «Հայաստանի Հանրապետութիւն» օրաթերթերի, ետ է վերադարձնում մեր օրագրական ուղղագրութեամբ նիւթերը: Մինչդեռ մեր նորանկախ պետութեան առաջին օրէնքներինց մէկը (1993 թուական) լեզուի մասին օրէնքն էր՝ մասնաւորապէս ուղղագրութեան միասնականացման խնդրի կարեւորութեամբ: Լուրջ քայլեր ցայսօր այս ուղղութեամբ չեն արուել: Գիտաժողովներ են անցկացուել, յօդուածներ գրուել, սակայն հարցը համազգային լուծում չի ստացել:

Դիմելով շնորհանդէսին հրաւիրուած Պարոյր Հայրիկեանին՝ մեծարգեան ուղղագրութեան ջատագով մտաւորականներ խնդրեցին նրան՝ իրեն Հայաստանի նախագահին առընթեր մարդու իրաւունքները պաշտպանութեան յանձնարարելու համար, աշխատել 1922 թուականի Մարտի 3ի ձախակեր որոշումը չեղեցալ յայտարարելու գործընթացին:

ՄԵՆԱՆԱ ԲԱՍՈՒՄԱՆ «Ազգ»

ԱԿՆԿԱԼԻՔՆԵՐՆ ԻՐԱՏԵՍԱԿԱՆ ԵՆ. ԲԱՅՑ ԶԱՓԱԶԱՆՅՈՒՄԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՆԱԽԱԳԱՀԻ ԵԼՈՅԹԻ ՇՈՒՐԸ

Իր հեռուստատեսային ելոյթում Հայաստանի նախագահը յայտարարեց, որ 2001 թուականը բեկումնային է լինելու երկրի տնտեսութեան համար: Լատինատեքստ աղբիւրները հետեւեալն են՝ 300 միլիոն տուլար արժողութեամբ ծրագրեր Համաշխարհային Դրամատան, 165 միլիոն տուլար «Լինսի» հիմնադրամի մասնակցութեամբ, շուրջ 100 հազար զբօսաշրջիկների սպասուող ներկայութիւն Հայաստանում քրիստոնէութեան պետականօրէն ընդունման 1700ամեակի հանդիսութեան, անհատական ծրագրեր, ընթացիկ տարւում գրանցուած 22 տոկոս արտահանման աճ, դրական միտումներ տնտեսութեան մէջ: Այս ամէնի արդիւնքում, ըստ Ռուպիթ Քոչարեանի, ակնկալուում է ընդհանուր առմամբ 40-45 հազար աշխատատեղ: Արդեօք իրական է մե Հայաստանի տնտեսութեան մէջ ակնկալուող վերոնշեալ էական տեղաշարժերը: Այս հարցի պատասխանը ստանալու համար հարկ է անդրադառնալ յիշատակած ծրագրերին եւ դրանց իրագործման հնարաւորութիւններին: «Լինսի» հիմնադրամից ակնկալուող գումարների տօնոյնման շուրջ ճոր պայմանագիրը գրեթէ պատաստ է եւ որոշակիօրէն տարբերուելու մասիորդիկ վարկաւորման ժամկետների, չափերի եւ ընդհանրապէս վարկերի տրամադրման դիրքացման առումով: Արդէն կատարուած է գումարների բաշխումը ըստ ոլորտների: Այսինքն այս աղբիւրը կարելի է համարել իրատեսակաց:

Համաշխարհային Դրամատան հետ առնչուող զարգացման ծրագրերին հարկ է վերաբերուել որոշակի վերապահումներով, քանզի գումարները տրամադրուում են խիստ մանրակրկից գնումած ծրագրերին: Շատ յայտնի ամենայնչին քերականները բերում է վարկի տրամադրման, հետեւաբար նաեւ ծրագրի իրականացման յետաձգման: Այս առումով, Համաշխարհային Դրամատան մասնակցութեամբ ծրագրերի իրագործումը, յամենայնդեպ նախաւորուող ժամկետներում, այնքան էլ իրատեսակաց չի բուււ:

Զբօսաշրջութեան շնորհիւ ակնկալուող շուրջ 100 միլիոն տուլար քերէն կարելի է համարել իրատեսակաց: Այստեղ սակայն հարկ է ջնջել, որ բացի այսուրպէսական դրական արդիւնքից, այն կարող է յանձնեցնել նաեւ անընդաժայի հետեւանքները: Յայտնի է, որ քիչ ժամանակ է մնում մինչեւ քրիստոնէութեան պետականօրէն ընդունման 1700ամեակի միջոցառումները, սակայն դրանք նախապատասխանուելու գործընթաց չի ընթանում համընթաց քայլերով: Մասնաւորապէս դաճողում են իրարանցների շինարարութեան եւ միջազգային չափանիշների համապատասխանեցման, դէպի պատմա-ճարտարապետական յուշարձաններ տանող տեղական նշանակութեան ճանապարհների եւ սպասարկող հաստատութիւնների ստեղծման: զովագրային աշխատանքները: Այս ամէն կարող է յանձնեցնել այն բանի, որ Հայաստան այնչեւս զբօսաշրջիկները, եթէ անգամ կազմոււմ աւելի մեծ թիւ, քան 100 հազարը, այստեղից հեռանան եթէ ոչ իրաքափառու: ապա առանց ոգևորութեան եւ կրկնի այնչեւս ցանկութեամբ:

Դետեւաբար զբօսաշրջիկների ակնկալուող թիւը դեռեւս չի նշանակում արձանակաց շրջադարձ այս ոլորտում: Միայն զագաքախառնուցումների արագ ստեղծումը կարող է դրական ազդեցութիւն ունենալ հետագայում տնտեսութեան զարգացման վրայ ընդհանրապէս:

Մասնաւոր ծրագրերը քերէն ամենայնուային են: Մինչ այժմ այդպիսիք արդէն իրենց արդիւնքները ի ցոյց են հանել «Կանազ», «Մանես Վալթը», «Կրեթ վելի», ինչպէս նաեւ ընթացքի մէջ գտնուող տեղեկատուական արհեստագիտութեան «Էյ Փի Եի Լեպա Էյ ԼԵ», ժամանորակաց «Փրանք Միլիթ» (ի դէպ, կենսի կոչուած նախագահի անմիջական ջանքերի շնորհիւ), Ալիպալի լեոնահարստացուցիչ գործարանն է այլն: Ընթացիկ տարւում ստեղծուած աշխատատեղերի մի զգալի մասը անհատական ծրագրերի արդիւնք է, արձանագրուած ինչպէս վերոնշեալ խոշոր գործարքների, այնպէս էլ փոքր եւ միջին ձեռնարկատիրութեան բնագաւառում արձանագրուած որոշակի տեղաշարժերի շնորհիւ: Մրան սերտօրէն շարկապոււմ է նաեւ արտահանման ծաւալների աճը, ինչի շարունակելու միտումն աւակալ է:

40-45 հազար աշխատատեղերի ստեղծման հնարաւորութիւնը եւս որոշակի կանակածըների տեղիք է տալիս: Արդէն նշուեց, որ ընդլայն մատանցում ծրագրեր են իրատեսակաց, հետեւաբար այս թիւն են մասամբ կարելի է այդպիսին համարել: Հարկ է ջնջել նաեւ, որ աշխատատեղերի մի մասը ակնկալուում է գործարկել դարձեալ 1700ամեակի տօնական միջոցառումներին եւ ոչ արտադրական ոլորտում բարեկարգման աշխատանքներ, ճանապարհների, մայրուղիների շինարարութեան եւ այլն: Այսինքն այդ աշխատատեղերը ժամանակաւոր են:

Եթէ ընդհանրացնելու լինենք Հայաստանի նախագահի 2001 թուականին վերաբերող կանխատեսման գնահատականները, կարելի է ասել, որ այն զուրկ է իրական հիմքերից, սակայն ակնկալիքները չափազանցուած են: Յամենայնդեպ, անգամ կիսով չափ իրականացուող դէպքում, ինչպէս երկրի տնտեսութիւնը ընդհանրապէս, այնպէս էլ բնակչութեան մի մասն անմիջականօրէն կը զգայ դրական արդիւնքները:

ԱՍՐԱՆԱ ԲԱՍՈՒՄԱՆ «Ազգ»

ԱԶՐՊԷՅՏԱՆԱԿԱՆ ՁԵՐՄ ԵՒ ՇԱՏ ՁԵՐՄ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹԻՒՆ

Հոկտեմբերի 28-31ը Պաքուում, մօտ 400 հոգու մասնակցութեամբ տեղի է ունեցել Հէյրիկեան քաղաքացիական վեհաժողովի 3րդ կիսաօրը վեհաժողովը: Վերջինիս մասնակցած հայաստանեան եւ դարաբաղեան պատուիրակութեան ներկայացուցիչները Յ Նոյեմբերին հրաւիրել էին մասնակցել ստուելու: Հակամարտութիւնից ի վեր մեր հասարակական կազմակերպութիւնների ներկայացուցիչներն առաջին անգամ Ազրպէյճանի սահմանը հասել են անհամաձայնութեան սահմանը: Առաջին անգամ է նաեւ, որ Ազրպէյճանում կայացած միջոցառմանը դարաբաղեան պատուիրակութիւնը մասնակցել է որպէս առանձին կողմ:

3-5 տարին մէկ տեղի ունեցող վեհաժողովն այս անգամ ունեցել է «Պաքուի կոչը. քաղաքակրթութիւնների եւ մշակոյթների երկխօսութիւն»: Քննարկուել են մարդու իրաւունքների, երիտասարդութեան, համաշխարհայնացման եւ այլ հարցեր, սակայն հիմնականում՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետութեան շուրջ հակամարտութեան խնդիրը: Հայաստանեան ազգային կոմիտէի համանախագահ Անահիտ Բայանդուրի հաւատարմացմամբ, թէ եւ եղել են անհամաձայնութեան ինչ-որ փոքր դրսեւորումներ, սակայն «դրական» կարեւորագիտակցութեամբ զերիշխել էր», ընդունուել են որոշումներ, որ երկխօսութիւնն ու համազորակցութիւնը պէտք է շարունակուի:

Կովկասեան ջերմ հիւրասիրութեան արժանացած ու գոհունակ հայաստանեան պատուիրակութեան տպուկութե

Հիբանանեան Մամուլ

«ԱՐԱԻ ՄԵՋ ԿԸ ՉՏՆՈՒՆԵՐ 1978ԷՆ Ի ՎԵՐ ԵՒ ՄԱԶԱՐԷՇ ԶԵՊԱԱՆ ՄԵՐ ԱՌԱՔԵԼՈՒԹԵԱՆ ԾԻՐԻՆ ՄԵՋ ՉԵՐ ՄՏԱԾ»

ԿԸՍԷ ԹԻՍՈՒՐ ԿՈՔՍԷԼ «ՏԻԱՐ» ԻՆ ՏՐՈՒՄՈՒ ՇԱՐՅԱԶՐՈՅՑԻՆ ՄԵՋ

Ստորեւ կը ներկայացնենք «Տիար» թերթին ներկայացրած, 6 Նոյեմբերի թիւին մէջ լոյս տեսած հարցազրոյցի մը մէկ հատուածը:

Հարցազրոյցը կատարուած է Ֆինի-Լի ուժերու պաշտօնակալ Բարձր Թիմուր Կոքսուլի հետ, որ իր դիտարկումները կ'անդրադարձնէ Մազարեի շրջանային պատկանելութեան եւ հարաւային Լիբանանի կացութեան:

ՀԱՐՑՈՒՄ.- Ի՞նչպէս կ'որակէք հարաւային Լիբանանի կացութիւնը այսօր: Պատասխանի մէջ ձագամ ինքնին տալիս կ'ըսէ:

ՊԱՏԱՍԽԱՆ.- Դէպքերու ո՛չ մէկ կապ գոյութիւն ունի, չկայ նաեւ ուղղակի կապ մը Պաղեստինի մէջ տեղի ունեցող զինուորական իրադարձութիւններուն եւ հարաւային Լիբանանի միջեւ: Սակայն, նկատի ունենալով, որ Պաղեստին արաբական սահմանային շրջան մըն է եւ Լիբանանի մէջ ապրող կարգ մը պաղեստինցիներ արեւան եւ ազգականական կապեր ունին Պաղեստինի մէջ ապրող իրենց ազգակիցներուն հետ, այս մէկը ինքնաբերաբար պզգեցութիւն կ'ունենայ երկու կողմերուն միջեւ՝ առանց ուղղակի կապի մը գոյութեան:

Հ.- Ձեր կարծիքով, արդեօք Պաղեստինի մէջ տեղի ունեցածը պատերազմի մը կա յո՞վ եւ, որ պիտի տարածուի ամբողջ Միջին Արեւելքի վրայ:

Պ.- ՄԱԿը մտահոգուող Պաղեստինի եւ Լիբանանի իրադարձութիւններուն կապուածութիւնն է, սակայն կը թուի, թէ ոչ մէկ կ'ուզէ կապուածութիւն վատթարացնել: Բոլորն ալ կը բախանան մեծութիւնը այն վտանգներուն, որոնք կրնան յառաջանալ այս կացութեան վատթարացման պարագային: Բայց կրնայ տեղի ունենալ իրադրոյց մը, որ պատճառ դառնայ կարգ մը անհատական հարցերու ծագման՝ ներքին զգացական տագնապներու պատճառով, ինչ որ կրնայ արաբական յառաջացնել սահմանին վրայ:

